ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 35-Ա

«22» մայիսի 2018 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 384-Ն որոշման 3-րդ, 4-րդ, 5-րդ կետի գ) ենթակետի, 7-րդ, 11-րդ և 16-րդ կետերի դրույթներով՝

Որոշում եմ

1.Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայություններ և նշանակել քաղաքացիական պաշտպանության ծառայության պատասխանատուներ՝

1) կապի և ազդարարման ծառայություն, ծառայության պետ՝Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի պատասխանատու՝ Աղվան Հովսեփյան,

2) ինժեներական ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի քաղաքաշինության և ճարտարապետության պատասխանատու՝ Վարդան Շաղոյան,

3) բժշկական ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի «Ամասիայի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն՝ Աննա Մկոյան,

4) նյութատեխնիկական մատակարարման, առևտրի և սննդի ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ֆինանսատնտեսագիտական պատասխանատու՝ Արթուր Մկրտումյան,

5) տրանսպորտային ծառայություն, ծառայության պատասխանատու՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի տրանսպորտի պատասխանատու՝ Գարեգին Թորոսյան:

6) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն, ծառայության պատասխանատու՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի համատիրությունների մոնիտորինգի պատասխանատու՝ Հայկանուշ Պետրոսյան,

7) հասարակական կարգի պահպանման ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզի Ամասիայի բաժնի պետ՝ Մխիթար Վարդանյան,

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

1) համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունների և պլանների կազմման նպատակով փաստաթղթերի օրինակելի ձևերը տրամադրել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին և անհրաժեշտության դեպքում ցուցաբերել մեթոդական օգնություն:

3. Համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին՝

1) կազմել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունները և պլանները համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի հաստատմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«22» մայիսի 2018 թվական
գյուղ Ամասիա